

**ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Քիմիայի լաբորատորիա մտնելուց առաջ անպայման անհրաժեշտ է ծանոթանալ և տիրապետել անվտանգության կանոններին՝ դժբախտ դեպքերից խուսափելու համար:

- 1) Քիմիայի լաբորատորիայում աշխատելիս պետք է հագնել աշխատանքային վերնազգեստ (խալաթ), որը պետք է միշտ կոճկված լինի, իսկ անհրաժեշտության դեպքում հագնել նաև ձեռնոցներ և պաշտպանիչ ակնոց կրել: Երկար մազերը պետք է հավաքված լինեն:
- 2) Լաբորատորիայում խստիվ արգելվում է ուտել և խմել: Մաստակ ծամելն անթույլատրելի է:
- 3) Քիմիական նյութերով լցված բոլոր անոթները պարտադիր պետք է ունենան պիտակ, որի վրա գրված լինի նյութի անվանումը և քիմիական բանաձևը:
- 4) Քայքայիչ նյութերը (թթուներ և հիմքեր) մաշկի վրա ընկնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես լվանալ հոսող, առատ ջրով: Այնուհետև թթվի դեպքում մշակել սոդայի նոսր լուծույթով, իսկ ալկալու դեպքում՝ բորաթթվի կամ քացախաթթվի նոսր լուծույթով:
- 5) Առանց ուսուցչի թույլտվության չի կարելի իրար խառնել կամ տեղափոխել քիմիական նյութերը:
- 6) Եթե թթուն կամ ալկալին ընկել են աչքի մեջ, անհրաժեշտ է անմիջապես, կռանալով լվացարանի վրա, լվանալ աչքերը հոսող ջրով:
- 7) Ոչ մի դեպքում քիմիական նյութերը չբռնել ձեռքով: Այդ նպատակի համար օգտվեք գդալից, բահիկից, թիակից կամ նրբունելիից:
- 8) Խիստ արգելվում է համտեսել քիմիական լաբորատորիայում պահվող նյութերը, եթե անգամ առօրյա կյանքում այդ նյութերն օգտագործվում են սննդի մեջ (կերակրի աղ, շաքար և այլն):
- 9) Թունավոր և տհաճ հոտ ունեցող նյութերով փորձերը կատարել քարշիչ պահարանում:
- 10) Որոշ գազային նյութեր կամ քիմիական նյութերի գոլորշիներ ներշնչելիս առաջանում են թունավորումներ: Այդ պատճառով քիմիական լաբորատորիայում

հոտավետ գազերի և գոլորշիների հոտը որոշելու համար անհրաժեշտ է դրանք ձեռքով մղել դեպի քիթը և հոտ քաշել հեռվից:

- 11) Կատարել փորձեր միայն մաքուր անոթներով: Քիմիական սպասքը միշտ պետք է խնամքով մաքուր լվանալ:
- 12) Քիմիական նյութերով լցված անոթները բացելիս կափարիչը պետք է այնպես դնել, որ սեղանը չկեղտոտվի:
- 13) Խստիվ արգելվում է կոյուղի թափել ֆիլտրի թուղթը, բամբակը կամ կոտրված ապակեղենի կտորները, ինչպես նաև քիմիական նյութերի լուծույթներ ու օրգանական հեղուկ նյութեր: Բոլոր թափոնները պետք է հավաքվեն համապատասխան ձևով պիտակավորված փակվող տարայի մեջ:
- 14) Փորձերն սկսելուց առաջ անհրաժեշտ է աշխատանքային սեղանի վրայից հեռացնել ավելորդ ամեն ինչ:
- 15) Չի կարելի, առանց նախապես լվացած ձեռքերի, դիպչել մարմնի տարբեր մասերին՝ դեմքին, աչքերին և այլն:
- 16) Ոչ մի դեպքում պիպետով նմուշառումը չիրականացնել բերանով: Միշտ օգտագործել դրա համար նախատեսված տանձիկ:
- 17) Լաբորատորիայից դուրս գալուց առաջ անպայման ձեռքերը լվանալ օձառով:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Քիմիայի ամբողջ դասընթացը հասկանալու և յուրացնելու համար անհրաժեշտ է տեսական նյութի ուսումնասիրությանը զուգընթաց, կատարել ծրագրում ներառված բոլոր գործնական և լաբորատոր աշխատանքները:

Քիմիական փորձը հաջող և անվտանգ կատարելու նպատակով անհրաժեշտ է հիշել և պահպանել քիմիայի լաբորատորիայում աշխատելու անվտանգության տեխնիկայի բոլոր կանոնները:

Յուրաքանչյուր գործնական աշխատանքին պատրաստվելիս աշակերտը՝

- ա) կրկնում է դասագրքի համապատասխան տեսական նյութը (տեսությունը),
- բ) ծանոթանում է աշխատանքի բովանդակությանը,
- գ) աշխատանքային տեսքում համառոտագրում է աշխատանքի բովանդակությունը, ծանոթանում է սարքավորումներին, վերհիշում է ռեակցիաների հավասարումները, ինչպես նաև աշխատանքային տեսքում տեղ է թողնում դիտարկումների և հետևությունների համար, որոնք կկատարվեն լաբորատոր աշխատանքն ավարտելուց հետո,
- դ) կրկնում է անվտանգության տեխնիկայի կանոնները, սովորում է նոր կանոններ, եթե դրանք անհրաժեշտ են տվյալ աշխատանքի համար:

Յուրաքանչյուր աշակերտ գործնական առաջադրանքը պետք է կատարի իր համար նախատեսված աշխատանքային տարածքում, համապատասխան սարքավորումներով և նյութերով: Անհրաժեշտ է պահպանել տարածքի մաքրությունը: Նյութեր թափվելու դեպքում դրանք մաքրել անձեռոցիկով, ապա՝ խոնավ լաթով: Կանչել լաբորատորիայի պատասխանատու անձին (ուսուցիչ կամ լաբորանտ):

Կարևոր է, որ աշակերտը լաբորատոր աշխատանքը կատարի՝ առանց շեղվելու տրված առաջադրանքից, այսինքն՝ ձեռք չտա ծորակներին, փորձին չվերաբերող նյութերին և սարքերին: